ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№397-Ա «23» 12 2021 թ. ք.Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱՇԽՄԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի N 61-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը ու ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի N 30-L հրամանի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել՝

Պետական գույքի կառավարման կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաշխման սխեմատիկ կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:

2. Պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության, պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության, իրավական ապահովման և դատական ներկայացուցչության բաժինների գործունեության համակարգումը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Վահան Պապիկյանին:

3. Պետական բաժնեմասի կառավարման, պետական գույքի տնօրինման վարչությունների գործունեության, Պետական գույքի կառավարման կոմիտեի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման համակարգումը, ինչպես նաև պետական

մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման գործընթացը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Դավիթ Գասպարյանին:

4. Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության, քարտուղարության, անձնակազմի կառավարման և առաջին բաժինների գործունեության համակարգումը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղար Մարո Մարգարյանին:

5. Ուժը կորցրած ճանաչել Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2020 թվականի մայիսի 27-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի գործառույթների իրականացման համակարգումը կոմիտեի նախագահի տեղակալների միջև բաշխելու ու պետական գույքի կառավարման կոմիտեի սխեմատիկ կառուցվածքը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2012 թվականի հունվարի 30-ի N 05-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 61-Ա հրամանը:

Восстановимая подпись

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Подписано: SARGSYAN GARIK 2811870695 **ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ**